Վրաստանի էթնիկ փոքրամասնությունների արտաքին քաղաքական կողմնորոշման առանձնահատկությունները

ՄԱԼԽԱԶ ՄԱՅԱԲԵՐԻՁԵ
Իվանե Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարան, Վրաստան

Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունները լիովին ինտեգրված չեն վրաց հասարակության մեջ: Այդ գործոնն էապես ազդում է երկրի արտաքին քաղաքական կուրսի վերաբերյալ նրանց տարբեր տեսակետների ձևավորման վրա: Վրաստանի երկու ամենախոշոր էթնիկ փոքրամասնությունների՝ ադրբեջանցիների և հայերի, զգալի մասն ավելի ռուսամետ է, քան էթնիկ վրացիները: Ուստի, նրանք ավելի քիչ աջակցություն են ցուցաբերում Վրաստանի եվրաատլանտյան ինտեգրման քաղաքականությանը: Այդ միտումն ակնհայտ է դառնում վերջին մի քանի տարում Վրաստանում անցկացված հասարակական կարծիքի հարցումների ուսումնասիրության միջոցով: Այդ առումով հետաքրքիր են Միացյալ Նահանգների Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (ԱԺԻ) հասարակական կարծիքի հարցումները[1]:

Բանալի բառեր
Էթնիկ փոքրամասնություններ, հայեր, ադրբեջանցիներ, Վրաստան, հասարակական կարծիքի հարցումներ

Վրաստանի առավել խոշոր երկու էթնիկ փոքրամասնությունները՝ ադրբեջանցիները և հայերը

Ըստ 2014թ. մարդահամարի տվյալների՝ Վրաստանի բնակչությունը (բացառությամբ Աբխազիայի և Հարավային Օսիայի) կազմում է 3.713,8 հազար մարդ, որից 3.224,6 հազարը՝ վրացի (86.8 տոկոս): Ամբողջ բնակչության 13.2 տոկոսը կազմող էթնիկ փոքրամասնությունների կազմում գերակշռում են ադրբեջանցիները (233,0 հազար, 6.3 տոկոս) և հայերը (168,1հազար, 4.5 տոկոս): Այլ էթնիկ փոքրամասնությունները

[1] Ազգային ժողովրդավարական ինստիտուտը Վրաստանում պարբերաբար անցկացնում է հասարակական կարծիքի հարցումներ: 2016 թվականից հարցման մեջ առանձին ներառվեցին էթնիկ փոքրամասնություններով բնակեցված տարածքները: 2016թ. երեք անգամ (մարտ, հունիս, նոյեմբեր) անցկացվեցին հարցումներ հայերով և ադրբեջանցիներով բնակեցված տարածքներում, ինչը հնարավորություն տվեց հետևել հասարակական կարծիքի դինամիկային էթնիկ փոքրամասնությունների շրջանում:

զգալիորեն զիջում են թվային ցուցանիշներով: Ռուսները կազմում են 26.5 հազար մարդ՝ ամբողջ բնակչության 0.7 տոկոսը[2]: Ադրբեջանցիների զգալի մասը (177.032 մարդ) խիտ բնակեցված է Քվեմո Քարթլիի մարզում, իսկ էթնիկ հայերի մեծ մասը (81.089 մարդ) բնակվում է Ջավախքում[3]:

Էթնիկ հայերի և ադրբեջանցիների շրջանում վրացերենի վատ իմացությունն այն հիմնական գործոնն է, որը խոչընդոտում է վրաց հասարակության մեջ նրանց լիարժեք ինտեգրմանը: Ըստ 2014թ. անցկացված հասարակական կարծիքի հարցումների, 231.456 մարդ ադրբեջաներենը նշել է որպես իր մայրենի լեզու, որից վրացերենին տիրապետում է 43.579 մարդ: Քվեմո Քարթլիի մարզում 176.417 մարդ ադրբեջաներենը նշել է որպես մայրենի լեզու, որից վրացերենին տիրապետում է միայն 18.983 մարդ:

Ըստ 2014թ. անցկացված հասարակական կարծիքի հարցման արդյունքների, 144.812 մարդ հայերենը նշել է որպես իր մայրենի լեզու, որից 57.316 հարցված փաստել է, որ վարժ տիրապետում է վրացերենին: Իրավիճակն ավելի բարդ է Սամցխե-Ջավախեթի մարզում: 79.878 մարդ հայերենը նշել է որպես իր մայրենի լեզու, որից միայն 5.573 հարցված է նշել, որ վարժ տիրապետում է վրացերենին[4]:

Վրացերենի վատ իմացության պատճառով Վրաստանի էթնիկ հայերի և ադրբեջանցիների զգալի մասը վրացական աղբյուրներից տեղեկատ-վություն չի ստանում: Ուստի, նրանք ունեն կա՛մ տեղեկատվության բաց, կա՛մ ընթացիկ գործընթացների վերաբերյալ հակասական տեղեկատվություն: Թեև Վրաստանի հանրային հեռուստաընկերությունը պարտավոր է նորությունները հաղորդել նաև փոքրամասնությունների լեզուներով, վերջիններս պարբերաբար չեն ստանում թարմ տեղեկատվություն: Դա էթնիկ փոքրամաս-

[2] Main results of the population census of 2014. General Information, http://census.ge/files/results/Census%20Release_GEO.pdf.
[3] Main results of the population census of 2014. Distribution of population according to regions and nationalities, http://census.ge/ge/results/census.
[4] Main results of the population census of 2014. Distribution of population according to regions, mother language and knowledge of the Georgian language, http://census.ge/ge/results/census.

նությունների քաղաքական և քաղաքացիական ներգրավվածության վրա[5]:

Էթնիկ հայերն ու ադրբեջանցիները հիմնականում տեղեկություն են ստանում իրենց հայրենիքից՝ իրենց մայրենի լեզվով կամ ռուսերենով՝ ռուսական հեռուստաընկերությունների միջոցով: Դա ևս նրանց օտարում է վրաց հասարակությունից[6]: Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի լրատվամիջոցներն ունեն բացասական կամ չեզոք դիրքորոշում Վրաստանի եվրաատլանտյան ինտեգրման քաղաքականության նկատմամբ:

Վերջին մի քանի տարիներին Վրաստանում անցկացված հասարակական կարծիքի հարցումները ցույց են տվել, որ էթնիկ փոքրամասնությունները կազմում են վրաց հասարակության առավել թույլ տեղեկացված հատվածը: Ի տարբերություն վրացիների՝ նրանք իրենց չեն նույնականացնում եվրոպացիների հետ և Ռուսաստանը համարում են իրենց լավագույն առևտրային դաշնակիցը[7]:

Արևմուտքը և Ռուսաստանն էթնիկ փոքրամասնությունների աչքերով

Ստորև դիտարկվում են Վրաստանի արտաքին քաղաքական կուրսի վերաբերյալ էթնիկ փոքրամասնությունների տեսակետների առանձնահատկությունները և դրանք համեմատվում են այդ հարցի վերաբերյալ հասարակական կարծիքի հարցումների արդյունքների հետ: Վրաստանի ազգային փոքրամասնությունների շրջանում և համաժողովրդական մակարդակում 2016թ. անցկացված հասարակական կարծիքի հարցումները ցույց են տվել ԵՄ-ին և ՆԱՏՕ-ի

---

[5] State of Being of Minorities in Georgia, The Georgian National Platform of the Eastern Partnership Civil Society Forum, 2013, p. 8, Policy Paper_WG1_Umciresobebi_1.pdf.

[6] **Mekhuzla S., Roshe E.,** Education Reform and National Minorities in Georgia, ECMI Working Paper, 2009 September, 46, p. 8, http://www.ecmicaucasus.org/upload/publications/working_paper_46_en.pdf.

[7] Assessment of Attitudes and Knowledge towards the EU in Georgia. Changes and Tendencies in 2009-2013, Research Outcomes, p. 5, eu_survey_report_2013_final_geo.pdf.

կառույցներին անդամակցության վերաբերյալ հասարակական դիրքորոշումների հետևյալ դինամիկան[8].

Աղյուսակ 1. Հարց. Համաձա՞յն եք Վրաստանի կառավարության հայտարարությանը ԵՄ-ին երկրի հեռանկարային անդամակցության վերաբերյալ:

	Համաժողովրդական հարցման արդյունքներ			Էթնիկ փոքրամասնություններով բնակեցված տարածքներում հարցման արդյունքներ		
	2016 III	2016 VI	2016 XI	2016 III	2016 VI	2016 XI
Այո	77	72	72	55	50	47
Ոչ	14	16	18	27	24	29
Չգիտեմ	9	12	10	18	26	24

Աղբյուր՝ 2016թ. ԱԺԻ-ի անցկացրած հարցում

Աղյուսակ 2. Հարց. Համաձա՞յն եք Վրաստանի կառավարության հայտարարությանը ՆԱՏՕ-ին երկրի հեռանկարային անդամակցությանը:

	Համաժողովրդական հարցման արդյունքներ			Էթնիկ փոքրամասնություններով բնակեցված տարածքներում հարցման արդյունքներ		
	2016 III	2016 VI	2016 XI	2016 III	2016 VI	2016 XI
Այո	68	64	61	44	47	39
Ոչ	19	22	25	31	25	32
Չգիտեմ	12	14	14	24	27	28

Աղբյուր՝ 2016թ. ԱԺԻ-ի անցկացրած հարցում

[8] Public Opinion Survey in Georgia: Results of March, 2016, conducted by the CRRC under the order of the NDI-Georgia-March-2016-PoliticalRatings-geo.pdf; Public Opinion in Georgia: Results of the Survey Conducted in June, 2016, conducted by the CRRC under the order of the NDI. NDI-poll-June-2016-geo.pdf; Public Opinion in Georgia: Results of the Survey Conducted in November, 2016, conducted by the CRRC under the order of the NDI. NDI_November 2016 poll_Issues_GEO.pdf.

Այս արդյունքները ցույց են տալիս, որ Վրաստանի արևմտամետ կողմնորոշմանն աջակցությունն ավելի ցածր է ազգային փոքրամասնությունների շրջանում, քան համաժողովրդական մակարդակում: 2016թ. մարտին ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին Վրաստանի ապագա անդամակցությանն ուղված աջակցությունը 22 և 24 տոկոսով ավելի ցածր էր համաժողովրդական հարցման ցուցանիշներից: 2016թ. այդ հարցի վերաբերյալ հասարակական դիրքորոշման մեջ արձանագրված փոփոխությունների արդյունքում Վրաստանի եվրաատլանտյան ինտեգրմանն աջակցությունը 77 տոկոսից նվազեց մինչև 72 տոկոս՝ համաժողովրդական հարցման ցուցանիշներով, իսկ էթնիկ փոքրամասնությունների շրջանում՝ 55 տոկոսից նվազեց 47 տոկոսի:

ՆԱՏՕ-ին անդամակցությանն աջակցության ցուցանիշը 10 տոկոսով ավելի ցածր է ԵՄ-ին անդամակցությանն աջակցության ցուցանիշից՝ ինչպես համաժողովրդական մակարդակում, այնպես էլ էթնիկ փոքրամասնությունների շրջանում անցկացված հարցման արդյունքներով: 2016թ. հասարակական կարծիքի դինամիկայի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ համաժողովրդական մակարդակում ՆԱՏՕ-ին անդամակցությանն աջակցության ցուցանիշը նվազել է 7 տոկոսով (68 տոկոսից՝ 61 տոկոսի), իսկ էթնիկ փոքրամասնությունների շրջանում՝ 5 տոկոսով (44 տոկոսից՝ 39 տոկոսի):

2016թ. ԱԺԻ-ի անցկացրած հարցումների համեմատությունը նախորդ տարիներին անցկացված հարցումների հետ փաստում է, որ Վրաստանի էթնիկ փոքրամասնությունների շրջանում ԵՄ-ին անդամակցությանն աջակցությունը մեծացել է: Հասարակական կարծիքի հարցման արդյունքներով՝ էթնիկ փոքրամասնությունների 52 տոկոսը կողմ էր ԵՄ-ին Վրաստանի անդամակցությանը կամ չուներ հստակ դիրքորոշում, եթե այդ հարցը դրվեր քվեարկության: Էթնիկ փոքրամասնությունների մեկ երրորդը ԵՄ-ն տեսնում էր դրական լույսի ներքո, մեկ երրորդն ուներ չեզոք դիրքորոշում հարցի վերաբերյալ, իսկ 23 տոկոսը դեռևս չուներ հստակ ձևավորված դիրքորոշում[9]:

Էթնիկ փոքրամասնությունների շրջանում անցկացված հարցումները ցույց են տալիս, որ ռուսամետ կողմնորոշման ցուցանիշն ավելի բարձր է էթնիկ փոքրամասնությունների շրջանում: Ըստ 2016թ.

[9] Assessment of Attitudes…, p. 7.

մարտին անցկացված հասարակական կարծիքի հարցումների, համաժողովրդական մակարդակում հարցվածների 47 տոկոսը Ռուսաստանը համարում է Վրաստանի գլխավոր սպառնալիք, մինչդեռ էթնիկ փոքրամասնությունների շրջանում այդ ցուցանիշը 19 տոկոս է[10]:

Աղյուսակ 3. Հարց. Ո՞ր երկիրը կամ կազմակերպությունն է հանդիսանում գլխավոր սպառնալիք Վրաստանի համար:

	Համաժողովրդական հարցման արդյունքներ	Էթնիկ փոքրամասնություններով բնակեցված տարածքներում հարցման արդյունքներ
Ռուսաստան	47	19
Իրաքի և Լևանտի իսլամական պետություն	8	11
Միացյալ Նահանգներ	7	7
Թուրքիա	5	8
ՆԱՏՕ	2	4

Աղբյուր՝ 2016թ. ԱԺԻ-ի անցկացրած հարցում

2013թ. անցկացված հասարակական կարծիքի հարցումները ցույց են տվել, որ էթնիկ փոքրամասնություններն ունեն դրական վերաբերմունք Ռուսաստանի նկատմամբ: Հարցվածների 57 տոկոսը Ռուսաստանը համարում էր Վրաստանին առավել մեծ աջակցություն ցուցաբերած երկիրը (այդ ցուցանիշը կազմել է 17 տոկոս էթնիկ վրացիների շրջանում): Միաժամանակ, էթնիկ վրացիները գտնում են, որ ԵՄ-ի՝ Վրաստանին ցուցաբերած աջակցությունն ավելի մեծ է, քան որևէ այլ պետության կամ միավորման դեպքում: 2013թ. հարցման արդյունքներով՝ այդ ցուցանիշը կազմել է 38 տոկոս էթնիկ վրացիների և 14 տոկոս՝ էթնիկ փոքրամասնությունների շրջանում[11]:

Էթնիկ փոքրամասնությունների ռուսամետ կողմնորոշումն ակնհայտ է դառնում օտար լեզվի ընտրության հարցի ուսումնա-

[10] Public Opinion in Georgia: Results of the Survey Conducted in March, 2016, conducted by the CRRC under the order of the NDI; NDI-Poll-Georgia-March-2016-geo.pdf.
[11] Assessment of Attitudes…, p. 11.

սիրության միջոցով: 2013թ. անցկացված հասարակական կարծիքի հարցումների համաձայն՝ այն հարցին, թե «Ո՞ր օտար լեզուն պետք է լինի երկրորդ պարտադիր օտար լեզու միջնակարգ դպրոցներում», էթնիկ փոքրամասնությունների 53 տոկոսը նշել է ռուսերենը, մինչդեռ էթնիկ վրացիների շրջանում այդ ցուցանիշը կազմել է ընդամենը 25 տոկոս: Էթնիկ վրացիների 62 տոկոսը նշել է Վրաստանի միջնակարգ դպրոցներում անգլերենը որպես երկրորդ օտար լեզու դասավանդելու անհրաժեշտության մասին: Անգլերեն լեզվի ընտրությունը վկայում է էթնիկ վրացիների արևմտամետ կողմնորոշման մասին: Միաժամանակ, էթնիկ փոքրամասնությունների կողմից ռուսերեն լեզվին տրված առաջնահերթությունն անպայմանորեն չի նշանակում, որ նրանք ռուսերենին տիրապետում են ավելի լավ, քան էթնիկ վրացիները: Հարցմանը մասնակցած վրացիների 29 տոկոսը նշել է, որ տիրապետում է ռուսերենին, մինչդեռ էթնիկ փոքրամասնությունների դեպքում այդ ցուցանիշը կազմել է 20 տոկոս: Էթնիկ փոքրամասնությունների 17 տոկոսը և էթնիկ վրացիների 10 տոկոսը նշել են, որ չունեն ռուսերեն լեզվի տարրական գիտելիքներ[12]:

Էթնիկ փոքրամասնությունների դիրքորոշումները Վրաստանի արտաքին քաղաքականության վերաբերյալ

Վրաստանի արտաքին քաղաքական կուրսի տարբերությունները պայմանավորված են հասարակության շրջանում Արևմուտքի և Ռուսաստանի վերաբերյալ տարակարծություններով: Արևմտամետ քաղաքական կուրսին աջակցությունը զգալիորեն ավելի ցածր է ազգային փոքրամասնությունների շրջանում, քան համաժողովրդական մակարդակում: Ըստ 2016թ. մարտին ԱԺԻ-ի իրականացրած հարցման արդյունքների, էթնիկ փոքրամասնությունների 20 տոկոսը կողմ է ռուսամետ արտաքին քաղաքականությանը, մինչդեռ այդ ցուցանիշը կազմել է ընդամենը 5 տոկոս համաժողովրդական հարցման արդյունքներով: Էթնիկ փոքրամասնությունների 25 տոկոսը նշել է, որ Վրաստանը պետք է վարի ռուսամետ արտաքին քաղաքականություն՝ միաժամանակ պահպանելով լավ հարաբերություններ ՆԱՏՕ-ի և ԵՄ

[12] Assessment of Attitudes…, p. 12.

կառույցների հետ (այդ արտաքին քաղաքական կուրսի կողմնակիցները կազմել են 16 տոկոս համաժողովրդական հարցման արդյունքներով): Էթնիկ փոքրամասնությունների 27 տոկոսը կողմ էր արևմտամետ արտաքին քաղաքականությանը՝ միաժամանակ բարիդրացիական հարաբերություններ պահպանելով Ռուսաստանի հետ (համաժողովրդական հարցման արդյունքներով՝ այդ ցուցանիշը կազմել է 52 տոկոս): Բացառապես արևմտամետ արտաքին քաղաքական կուրսին աջակցությունը կազմել է 12 տոկոս էթնիկ փոքրամասնությունների շրջանում անցկացված հարցման և 14 տոկոս՝ համաժողովրդական հարցման արդյունքներով[13]: Հատկանշական է, որ 2016թ. արևմտամետ քաղաքական կուրսին աջակցությունը նվազել էր ինչպես էթնիկ փոքրամասնությունների շրջանում, այնպես էլ համաժողովրդական մակարդակում (աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Հարց. Ըստ Ձեզ, ինչպիսի՞ն պետք է լինի Վրաստանի արտաքին քաղաքականությունը:

	Համաժողովրդական հարցման արդյունքներ			Էթնիկ փոքրամասնություններով բնակեցված տարածքներում հարցման արդյունքներ		
	III	VI	XI	III	VI	XI
Արևմտամետ	14	13	12	12	5	7
Արևմտամետ և լավ հարաբերություններ Ռուսաստանի հետ	52	48	54	27	28	25
Ռուսամետ՝ լավ հարաբերություններ ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի հետ	16	20	18	25	28	24
Ռուսամետ	5	6	9	20	23	30
Չգիտեմ	11	11	13	15	13	13

Աղբյուր՝ 2016թ. ԱԺԻ-ի անցկացրած հարցում

Վրաստանի էթնիկ հայ և ադրբեջանցի քաղաքացիների արտաքին քաղաքական առաջնահերթությունները զգալիորեն տարբերվում են

[13] Public Opinion in Georgia: Results of the Survey Conducted in March, 2016…

էթնիկ վրացիների առաջնահերթություններից: Դրա մասին են վկայում են հետևյալ ցուցանիշները. այն հարցին, թե որ երկիրը կարող է լավագույնս ապահովել Վրաստանի անվտանգությունը, ազգային փոքրամասնությունների 11 տոկոսը մատնանշել է Ադրբեջանը, մինչդեռ այդ ցուցանիշը կազմել է ընդամենը 1 տոկոս համաժողովրդական հարցման արդյունքներով: Ակնհայտորեն, Ադրբեջանը՝ որպես Վրաստանի անվտանգության գլխավոր երաշխավոր, նշել են Վրաստանի էթնիկ ադրբեջանցիները: Ազգային փոքրամասնությունների 8 տոկոսը Թուրքիան համարում է Վրաստանի գլխավոր սպառնալիք, մինչդեռ այդ ցուցանիշը կազմել է 5 տոկոս համաժողովրդական հարցման արդյունքներով: Ակնհայտորեն, Թուրքիան՝ որպես Վրաստանի թիվ մեկ սպառնալիք, մատնանշվել է Վրաստանի էթնիկ հայերի կողմից: Ազգային փոքրամասնությունների 29 տոկոսը նշել է, որ Ռուսաստանն այն երկիրն է, որը կարող է լավագույնս ապահովել Վրաստանի անվտանգությունը, մինչդեռ այդ ցուցանիշը կազմել է 13 տոկոս համաժողովրդական հարցման արդյունքներով[14]:

Աղյուսակ 5. Հարց. Ո՞ր երկիրը կամ կազմակերպությունը կարող է լավագույնս ապահովել Վրաստանի անվտանգությունը:

	Համաժողովրդական հարցման արդյունքներ	Էթնիկ փոքրամասնություններով բնակեցված տարածքներում հարցման արդյունքներ
ՆԱՏՕ	23	15
ԵՄ	13	16
Ռուսաստան	13	29
Միացյալ Նահանգներ	10	3
Ադրբեջան	1	11

Աղբյուր՝ 2016թ. ԱԺԻ-ի անցկացրած հարցում

[14] Public Opinion in Georgia: Results of the Survey Conducted in March, 2016…

Աղյուսակ 6. Հարց. ո՞ր երկիրը կամ կազմակերպությունն է հանդիսանում գլխավոր սպառնալիք Վրաստանի համար:

	Համաժողովրդական հարցման արդյունքներ	Էթնիկ փոքրամասնություններով բնակեցված տարածքներում հարցման արդյունքներ
Ռուսաստան	47	19
Իսլամական պետություն	8	11
ԱՄՆ	7	7
Թուրքիա	5	8
ՆԱՏՕ	2	4

Աղբյուր՝ 2016թ. ԱԺԻ-ի անցկացրած հարցում

Ո՞ր գործոններն են պայմանավորում էթնիկ փոքրամասնությունների ռուսամետ դիրքորոշումը: Ինչպես ցույց են տալիս ԱԺԻ-ի իրականացրած հարցման արդյունքները, օտարալեզու հեռուստաընկերությունները եւ լրատվամիջոցները առանցքային դեր են կատարում այդ դիրքորոշման ձևավորման գործում: Քանզի ընտրազանգվածի մի մասը տեղեկատվություն է ստանում արտասահմանյան լրատվամիջոցներից, նրանց ռուսամետ դիրքորոշման հավանականությունն էլ ավելի է մեծանում: Դա վերաբերում է նաև ոչ էթնիկ փոքրամասնություններին[15]: 2016թ. հունիսին ԱԺԻ-ի իրականացրած հարցումը ցույց է տվել, որ Վրաստանի բնակչության 23 տոկոսը ստանում է ընթացիկ տեղեկատվություն ոչ վրացական հեռուստաընկերություններից[16]: Այդ ցուցանիշը կազմել է 52 տոկոս ազգային փոքրամասնությունների շրջանում անցկացված հարցման արդյունք-ներով[17]:

[15] Public Opinion in Georgia: Results of the Survey Conducted in June, 2016…

[16] Հարցման արդյունքները ցույց են տվել, որ ոչ վրացական հեռուստաալիքների հիմնական լսարանը միջին տարիքի բնակչությունն է:

[17] Public Opinion in Georgia: Results of the Survey Conducted in June, 2016…, p.77.

Աղյուսակ 7. Հարց. Դուք ստանո՞ւմ եք տեղեկություն քաղաքականության և ընթացիկ զարգացումների վերաբերյալ ոչ վրացական հեռուստաընկերություններից:

	Համաժողովրդական հարցման արդյունքներ	Էթնիկ փոքրամասնություններով բնակեցված տարածքներում հարցման արդյունքներ
Այո	23	52
Ոչ	77	45

Աղբյուր՝ 2016թ. հունիսին ԱԺԻ-ի անցկացրած հարցում

Ըստ 2016թ. հունիսին անցկացված հարցման արդյունքների, Վրաստանում ամենաշատ դիտելիություն ունեցող հեռուստաալիքները ռուսական են, այդ թվում՝ «Ռուսաստանի առաջին ալիք»՝ 35 տոկոս, «ՌՏՌ»՝ 26 տոկոս, «Ռոսիա 1»՝ 18 տոկոս, «Ռոսիա 24»՝ 12 տոկոս, «Եվրոնյուզ»՝ 10 տոկոս, «ՌԵՆ ՏՎ»՝ 7 տոկոս, «ՏՎ Ցենտր»՝ 4 տոկոս, «Ար-Թի-Վի-Այ»՝ 2 տոկոս, «Ռուսաստանն այսօր»՝ 1 տոկոս: Հարցվածների 26 տոկոսը նշել է այլ հեռուստաալիքներ, որոնց թվում հայկական, ադրբեջանական, թուրքական և ռուսական այլ լրատվամիջոցներ:
Ռուսական ԶԼՄ-ների կողմից քաղաքականության և այլ հրատապ հարցերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն ունի ուղղակի ազդեցություն լսարանի արտաքին քաղաքական կողմնորոշման վրա: Հաշվի առնելով արտասահմանյան լրատվամիջոցների ազդեցությունը Վրաստանի բնակչության՝ արտաքին քաղաքական կուրսի ընտրության վրա՝ 2016թ. հունիսին ԱԺԻ-ի իրականացրած հարցման արդյունքում որվագծվել է հետևյալ պատկերը (աղյուսակ 8).

Աղյուսակ 8

	Հետևում է ոչ վրացական լրատվամիջոցների	Չի հետևում ոչ վրացական լրատվամիջոցների
Արևմտամետ	11	14
Արևմտամետ՝ ՌԴ-ի հետ լավ հարաբերություններով	43	50
Ռուսամետ՝ ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի հետ լավ հարաբերություններով	29	18
Ռուսամետ	9	5
Չգիտեմ	6	13

Աղբյուր՝ 2016թ. հունիսին ԱԺԻ-ի անցկացրած հարցում

Նույն միտումն ուսումնասիրվել է Վրաստանի կոնկրետ արտաքին քաղաքական կուրսի ընտրության նպատակահարմարության վերաբերյալ հարցման միջոցով (աղյուսակ 9)[18]:

Աղյուսակ 9

	Հետևում է ոչ վրացական լրատվամիջոցների	Չի հետևում ոչ վրացական լրատվամիջոցների
Վրաստանի համար ավելի շահավետ է եվրոպական և եվրաատլանտյան ինտեգրումը	47	55
Վրաստանն ավելի շահեկան դիրքում կհայտնվի, եթե հրաժարվի եվրաատլանտյան ինտեգրման քաղաքականությունից՝ ի նպաստ Ռուսաստանի հետ հարաբերությունների բարելավմանը	39	27
Համաձայն չեմ վերոնշյալ երկու պնդումների հետ	8	7
Չգիտեմ	5	11

Էթնիկ փոքրամասնությունները և Ռուսաստանի գործոնը

Էթնիկ փոքրամասնությունների ռուսամետ դիրքորոշումը կարող է օգտագործվել Ռուսաստանի և Վրաստանի ռուսամետ ուժերի կողմից: 2010թ. Վլադիմիր Սոկորը, մեկնաբանելով ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի 2010թ. հուլիսի 8-ի հայտարարությունը, պնդում էր, որ «Ռուսաստանը երբեք չի փորձել հրահրել որևէ էթնիկ խմբի՝ բացառությամբ աբխազների և հարավային օսերի»:[19] Հայտարարության մեջ Լավրովն առաջարկում էր Վրաստանի կառավարությանը վերականգնել բարիդրացիական հարաբերություններ հայերի, ադրբեջանցիների և Վրաստանում բնակվող մի շարք այլ էթնիկ խմբերի հետ: Դա զգուշացում էր Ռուսաստանի կողմից, որ

[18] Public Opinion in Georgia: Results of the Survey Conducted in June, 2016, …, p. 68.

[19] **Sokor V.,** Lavrov's allusion on inter-ethnic conflicts in Georgia, Jamestown Foundation, July 12, 2010, http://foreignpress.ge/analitika/2503-lavrovi-saqarthveloshi-ethnikuri-konfliqtis-tsaqezebaze-mianishnebs.html?lang=ka-GE.

վերջինս կարող է էթնիկ բնույթի լարվածություն առաջացնել Վրաստանում գործող ռուսամետ ուժերի պարտության դեպքում: Նման զարգացումների դեպքում Կրեմլը կփորձի գտնել տարբեր մեխանիզմներ՝ ապակայունացնելու ազգային փոքրամասնություն-ներով բնակեցված վրացական շրջանները[20]:

Վրաստանի տարբեր էթնիկ խմբերի ռուսամետ կողմնորոշումը չպետք է հանգեցնի վրաց հասարակության մեջ կարծրատիպերի ստեղծմանը: Վերլուծելով Սամցխե-Ջավախեթի մարզում ստեղծված իրավիճակը՝ փորձագետները նշում են, որ անընդունելի են այնպիսի հայտարարություններն, ինչպիսիք են «հայերը՝ Վրաստանում Ռուսաս-տանի հինգերերոդ շարասյունը», «Վրաստանի էթնիկ հայերը դեմ են եվրաատլանտյան ինտեգրմանը»: Դրանք հաճախ ներկայացվում են ոչ թե որպես անհատական ընտրություն, այլ որպես դավաճանություն «Մեծ Վրաստանի գաղափարին»[21]:

Որո՞նք են էթնիկ փոքրամասնությունների շրջանում ռուսամետ դիրքորոշումը պահպանելու մեխանիզմները: 2016թ. մարտին ԱԺԻ-ի իրականացրած հասարակական կարծիքի հարցման արդյունքների հրապարակումից հետո փորձագետները նշում էին ազգային ծրագրի վերափոխման անհրաժեշտության մասին: Առաջարկվում էր այն դարձնել ներառական և էթնիկ փոքրամասնությունների պահանջներին բավարարող[22]: Արևմտամետ արտաքին քաղաքականության և Վրաստանի եվրաատլանտյան ինտեգրման առավելությունների ներկայացումն ու տարածումը էթնիկ փոքրամասնությունների շրջանում կարող է նվազեցնել ռուսամետ արտաքին քաղաքական կողմնորոշումը: Այդ հաստատագրումը փաստում են վիզային ռեժիմի ազատականացման վերաբերյալ էթնիկ փոքրամասնությունների դիրքորոշումները:

2015թ. դեկտեմբերի 15-ին Եվրոպական հանձնաժողովը հրապարակեց վիզային ռեժիմի ազատականացման ուղղությամբ գործողությունների ծրագրի պահանջների կատարման վերաբերյալ

---

[20] Նույն տեղում:

[21] **Molodini G.,** The Russia Factor in Javakheti, December, 2010 https://www.researchgate.net/publication/216263291_**rusuli**_paktori_javakhetshi.

[22] **Tskhadaia G.,** A Few Notes on the Results of NDI Polls. 13.04.2016, http://www.tavisupleba.mobi/a/blog-giorgi-tskhadaia/27672369.html.

դրական զեկույց: Չնայած էթնիկ փոքրամասնությունները լավ տեղեկացված չէին այդ գործընթացին (58 տոկոս՝ ի տարբերություն համաժողովրդական հարցման ցուցանիշի, որը կազմել է 86 տոկոս), այդուհանդերձ վիզային ռեժիմի ազատականացման գործընթացի աջակիցները կազմում էին 69 տոկոս: «Համաձա՞յն եք այն հաստատագրմանը, որ վիզային ռեժիմի ազատականացումը շահավետ կլինի ժողովրդի համար» հարցին դրական պատասխանների թիվն էթնիկ փոքրամասնությունների շրջանում ավելի մեծ էր (74 տոկոս), քան համաժողովրդական հարցման արդյունքներով (72 տոկոս):

Աղյուսակ 10. Վիզային ռեժիմի ազատականացման վերաբերյալ հասարակական կարծիքի հարցման արդյունքներ[23]

	Համաժողովրդական հարցման արդյունքներ		Հարցման արդյունքներ Էթնիկ փոքրամասնություններով բնակեցված տարածքներում	
Տեղյա՞կ եք այդ գործընթացին:				
Այո	86		58	
Ոչ	11		35	
Չգիտեմ	4		7	
Կո՞ղմ եք այդ որոշմանը:				
Կողմ եմ	84		69	
Դեմ եմ	8		14	
Չգիտեմ	7		14	
Համաձա՞յն եք, որ ժողովուրդը օգուտներ կունենա այդ գործընթացից:	2016 III	2016 VI	2016 III	2016 VI
Համաձայն եմ	72	64	74	58
Համաձայն չեմ	18	26	17	21
Չգիտեմ	10	10	9	20

Վիզաների ազատականացման գործընթացի երկարաձգումը նվազեցրեց բնակչության լավատեսությունը: Թեև վիզաների ազատականացումն իրականություն դարձավ 2017թ. գարնանը, վրացիների և էթնիկ փոքրամասնությունների մտահոգության

[23] Public Opinion in Georgia: Results of the Survey Conducted in March, 2016…

հիմնական խնդիրները շարունակում են մնալ կենսամակարդակի բարելավումը և զբաղվածու-թյան հեռանկարը: Եթե քաղաքական գործիչները, կառավարությունը և քաղաքացիական հասարակությունը ցանկանում են մեծացնել Վրաստանում ԵՄ-ին աջակցությունը, ապա բնակչությանը հարկ է իրազեկել Վրաստանի եվրոպական ինտեգրման օգուտների մասին[24]:

Չնայած էթնիկ փոքրամասնությունների ռուսամետ դիրքորոշմանը, իշխող կուսակցությունը («Միացյալ Ազգային շարժում» կուսակցու-թյունը կամ «Վրացական երազանք» դաշինքը), որը խթանում է եվրաատլանտյան ինտեգրման քաղաքականությունը, ընտրություն-ների ժամանակ, այդուհանդերձ, ստանում է էթնիկ հայ եւ ադրբեջանցի փոքրամասնությունների աջակցությունը:

Եզրակացություն

Վրաստանի ամենախոշոր էթնիկ փոքրամասնությունների՝ ադրբեջանցիների և հայերի, արտաքին քաղաքականության առաջնահերթու-թյունները տարբերվում են էթնիկ վրացիների առաջնահերթություն-ներից: 2016թ. անցկացված հասարակական կարծիքի հարցումները ցույց են տալիս, որ էթնիկ փոքրամասնություններն ավելի ռուսամետ են և ավելի քիչ աջակցություն են ցուցաբերում Վրաստանի եվրաատլանտյան ինտեգրման քաղաքականությանը: Էթնիկ փոքրամասնությունների շրջանում հասարակական կարծիքի դինամիկան նույնն է, ինչ էթնիկ վրացիների դեպքում. երկու դեպքում էլ արձանագրվել է կոնկրետ արտաքին քաղաքական կուրսին աջակցության ցուցանիշի աճ և անկում:

Էթնիկ փոքրամասնությունների շրջանում արտաքին քաղաքա-կանության տարբեր առաջնահերթությունները կարող են մեկնաբան-վել վրացերենի վատ իմացությամբ և ռուսական լրատվամիջոցներից ակնհայտ կախվածությամբ: Քաղաքացիական ինտեգրման գործընթա-ցի շարունակականությունը և ԵՄ-ին մերձեցման քաղաքականու-թյունից աճող օգուտներն ակնհայտորեն կազդեն էթնիկ փոքրա-

[24] Assessment of Attitudes…, p. 9.

մասնությունների արտաքին քաղաքականության առաջնահերթությունների վրա:

Peculiarities of Foreign Policy Orientation of Georgia's Ethnic Minorities

MALKHAZ MATSABERIDZE
Ivane Javakhishvili Tbilisi State University, Georgia

.Ethnic minorities residing on the territory of Georgia are not fully integrated into the Georgian society. This factor has its implications on their various viewpoints on the foreign policy course of Georgia. A significant portion of the two most numerous ethnic minorities of Georgia – Azerbaijanis and Armenians – are more pro-Russian oriented segment of the population as compared to their Georgian counterparts. Therefore, they demonstrate less support towards foreign policy course aimed at the Euro-Atlantic integration. This tendency is highlighted by the public opinion polls conducted in Georgia during the last several years. Public opinion polls of the National Democratic Institute (NDI) of the US are particularly interesting in this respect.